մակցությունների ձեւաչափը՝ դրանցում ընդգրկելով Ստեփանակերտի ներկայացուցիչ: Սակայն նման դասնաբանական ծրագրերը դեռեւս գոյություն չունի, ուստի բանակցությունները հիմնվում են Մադրիդյան համաձայնությունների եւ այլ փաստաթղթերի վրա:

Ուստի ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրերը ս.թ. հուլիսի 4-ին ժաման գծի վրա սեղի ունեցած միջադեմը գնահատում են իբրեւ սադրանք, որը կարող է սղառնալ դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին եւ սղառնալիքի սակ դնել բանակցությունները: «Կողմերին հիշեցնում ենք Ժնևի միջազգագրվ իրենց ստանձնած դարավորությունները, որոնք ենթադրում են հրաժարում հնարավոր զոհերի հանգեցնող գործողություններից», ասվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարության մեջ: Կողմերին կոչ է արվում ձեռնդահ մնալ լարվածության հետագա սրումից եւ անցողորեն հետել 1994-1995թթ. հրադարարի համաձայնագրերին:

Ադրբեջանը նախընտրում է վկայակոչել ՄԱԿ-ի Ան ընդունած չորս բանաձեւերը, այլ ոչ թե 1994-1995թթ. համաձայնագրերը, որոնք ամրագրում են Ղարաբաղյան դրամաբանական ռազմական հակամարտության դադարեցումը, որը կրած դրամաբանական

ինչդեռ նաեւ դարձնակում են Ստեփանակերտի ստորագրությունը: Սակայն սկսվ դեմքում Ադրբեջանի դիվանագիտական ջանքերը ձախողվել են թեմեքե Ադրբեջանը Բաբվի սցենարով առաջընթացի բացակայության համար դարբերաբար փնտրառում է ոչ թե իր դեկավարությանը, այլ Մինսկի խմբի համաձայնագրերին: Ընդսմին սահմանային բախումների ծագման համար ամբաստանում է Երեւանի դիվանագիտությանը, մինչդեռ դա Բաբվի մասնակցությամբ անցկացված (թեմեքե նրա կողմից չստորագրված) Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի համաձայնագրերի արդյունքն է: Նման համատեքստում նաեւ ակնհայտ է, որ 2016թ. ապրիլյան դրամաբանական սեփական հաղթանակ բնութագրող Բաբուն չկարողացավ ամրագրել այն որդես արափին ֆաղափական ձեռքբերում:

Տարածաբանի աղակալուցման վստանքը մեծ է, եւ կարող է ամեն ինչ զարգանալ անսղառնալի սցենարով, կարծում է Ստանիսլավ Տարասովը: Եթե ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրերը առաջարկեն օգտագործել Ուկրաինայի, թերեւ նաեւ Սիրիայի հակամարտության կարգավորման փորձը, աղա կխոսեն Բաբվի ու Երեւանի միջեւ անկոնֆլիկտ գոտի ստեղծման անհրաժեքսության մասին: Եթե դա սեղի ունենա, աղա խոսոք իրադարծություն կդառնա ինչդեմ ամբողջ Անդրկլասի, այնդես էլ Սեծ Մերձավոր Արեւելի սարածաբանի համար: **Պ. Բ.**

«Մեծ ֆանյակի» (G20) համբուրգյան զագաթածողովից առաջ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Վարավայում Լեհաստան անվանել էր «Եվրոպայի սիր» եւ հայտարարել, թե Լեհաստանը ԱՄՆ-ի հետ մեկսեղ արեւնջյան աշխարհը կդաքսղանի զանազան սղառնալիքներից, մասնավորաղես ահաբեկչությունից:

Աղա Համբուրգում սեղի ունեցավ զլխավոր իրադարծությունը՝ Թրամփ-Պուսին հանդիպումը: Բագմաթիվ լրագրողների համար G20-ը աչփ չընկավ որդես խոսոք ու հիքարծան իրադարծություն եւ հարուս չէր ռազմավարական նեանակություն ունեցող դեմքերով: Անգելա Մերկելը մեքաղես դժգոհ սեք ուներ, Իվանկա Թրամփը բանակցությունների սեղանի մոք մեկ անգամ փոխարինեց հորը, իսկ ինքը՝ Թրամփը, Պուսինի հետ գրուցեց նախատեսվածից 2,4 անգամ ավելի երկար՝ երկու ժամ 15 րոք: Ահա եւ ամբողջ զագաթածողովը: Իրականում Անգելա Մերկելի դժգոհությունը կարելի է հասկանալ. Թրամփը հերթական անգամ աղաղուցեց, որ ֆաղափավարության կանոնները իրեն չեն հեքափրում, որ ինքը դաքստ է ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ի դաքնակիցներին հանդիպելու դարբերաբար վճարումներ չկատարելու համար, ինչդես նաեւ առանց ձեւականության միջանսել Եվրոպայի ներին ֆաղափականությունը:

Վերջաղես հասկանալի դարծավ, թե Իվանկան ինչդիսի սեղ է զբաղեցնում հոր վարչակազմում: Առաջին, նա վերահսկում է կանանց իրավունքների հետ կաղված հարցերը եւ համաղասախան մարմինների հետ կաղեր է հաստատում Մ. Մահանգների ներում եւ արեքլում: Սա կարելու հիմք է 2020թ. նախագահական ընտրություններից առաջ, որոնցում Թրամփը զուցե սղիղկյան հարաբերություններում ինչ-որ ձեղման կամ վերաբեռնման մասին: Չմայած այս ամենին, երկու գերեքությունների դեկավարների հանդիպումը կանխորոքեց աշխարհի իրադարծությունների ընթացքը առաջիկա սարիներին: Ինչ հարցեր են փնտրել միմյանց հանդեղ համակարանը չթաքնող երկու նախագահները: Զննարկվել են երկու կողմերի կենսական ահերն արահայտող հարցեր, մասնավորաղես Սիրիայի եւ Դոնքասի խնդիրները: Ինչ կարող էր ուզել Ռուսաստանը ԱՄՆ-ից: Եթե դաքենք Վլադիմիր Պուսինի խոսքերից, աղա կարելի է եղակացնել, որ դրամք են հակա-

Թրամփ-Պուսին հանդիպումը Համբուրգում



կում է կանանց իրավունքների հետ կաղված հարցերը եւ համաղասախան մարմինների հետ կաղեր է հաստատում Մ. Մահանգների ներում եւ արեքլում: Սա կարելու հիմք է 2020թ. նախագահական ընտրություններից առաջ, որոնցում Թրամփը զուցե սղիղկյան հարաբերություններում ինչ-որ ձեղման կամ վերաբեռնման մասին: Չմայած այս ամենին, երկու գերեքությունների դեկավարների հանդիպումը կանխորոքեց աշխարհի իրադարծությունների ընթացքը առաջիկա սարիներին: Ինչ հարցեր են փնտրել միմյանց հանդեղ համակարանը չթաքնող երկու նախագահները: Զննարկվել են երկու կողմերի կենսական ահերն արահայտող հարցեր, մասնավորաղես Սիրիայի եւ Դոնքասի խնդիրները: Ինչ կարող էր ուզել Ռուսաստանը ԱՄՆ-ից: Եթե դաքենք Վլադիմիր Պուսինի խոսքերից, աղա կարելի է եղակացնել, որ դրամք են հակա-

դային դաքսղանության համակարգերի զարգացման եւ ընդդիմության ֆինանսավորման դարարեցումը, Սիրիայում եւ Ուկրաինայում հակամարտությունների դիվանագիտական շրջափակման վերացումը, դաքծամիջոցների վերացումը, դեսուղյան բուր մակարղակներում ռուսասղացության հիքսերիայից հրաժարումը, եւ վերջաղես Ծաղոնիայի հետ սարծաղային վեճում ԱՄՆ-ի աջակցությունը: Իսկ ԱՄՆ-ին ինչ էր դեսք Ռուսաստանից: Այստեղ եւս զաղսնիքներ չկան՝ ՉԺԴ-ի հետ ռազմավարական հարաբերությունների խզում ինչդես ՄԱԿ-ում, այնդես էլ սնեստության մեջ, եւս մեկ ուժի կենսոնի ամրաղնդունը՝ առանց առաղոնիայան ընտրությունների, օղոնություն հակահաբեկչական դայաղին եւ ձնում ԿԺԴ-ի վրա, ջանքերի համակարգում ածխաջրածինների ողորում:

դային դաքսղանության համակարգերի զարգացման եւ ընդդիմության ֆինանսավորման դարարեցումը, Սիրիայում եւ Ուկրաինայում հակամարտությունների դիվանագիտական շրջափակման վերացումը, դաքծամիջոցների վերացումը, դեսուղյան բուր մակարղակներում ռուսասղացության հիքսերիայից հրաժարումը, եւ վերջաղես Ծաղոնիայի հետ սարծաղային վեճում ԱՄՆ-ի աջակցությունը:

Իսկ ԱՄՆ-ին ինչ էր դեսք Ռուսաստանից: Այստեղ եւս զաղսնիքներ չկան՝ ՉԺԴ-ի հետ ռազմավարական հարաբերությունների խզում ինչդես ՄԱԿ-ում, այնդես էլ սնեստության մեջ, եւս մեկ ուժի կենսոնի ամրաղնդունը՝ առանց առաղոնիայան ընտրությունների, օղոնություն հակահաբեկչական դայաղին եւ ձնում ԿԺԴ-ի վրա, ջանքերի համակարգում ածխաջրածինների ողորում:

Ինչդես նում է «Ռեզոնանս» գործակալությունը, երկու միջուկային գերեքությունների հարաբերություններում չկան միմյանց բացառող կեքեր կամ անլուծելի հակասություններ: Թրամփը իր Twitter-ում արծանագրեց, որ հակառուսական դաքծամիջոցների հարցը չի փնտրվել եւ առաջնությունը սրվել է Սիրիայի եւ Ուկրաինայի ձգմաժամերի հաղթահարմանը: Արեւուսում արդեն երեք սարի արծարծող Ղրիմի հարցը նույնդես չի փնտրվել: Հենց թերակղզու՝ Ուկրաինային վե-

րաղարծնելու անհնարինությունը այն անլուծելի հակասությունն էր, որը խոչընդոքում էր ռուս-ամերիկյան արգասավոր փոխաղաղակես հարաբերությունների հաստատմանը: Իսկ հիմա դա մասին ամենքը դարզաղես մոռացել են:

Այդուհանդերձ անհնար է հաստատել կամ ժխտել, որ երկու նախագահները փնտրել են հարցերի հենց այս շրջանակը: Կարելի է դաքել լուկ անլուղակիրեն, ՋԼՄ-ների ներկայացուցիչներին արված հայտարարություններից:

Վլադիմիր Պուսինը լրագրողներին մասնավորաղես սասց, որ Թրամփին առավել առ հեքափրել է այն հարցը, թե Ռուսաստանը միջանսել է արդյոք ԱՄՆ-ի նախագահական ընտրություններին: Պուսինի խոսքերով, ինքը սղառնից դաքսաղաններ է սվել Թրամփի հարցերին եւ կարծում է, որ զոհաղել է նրան:

Ավստրիական Kurier թերթն արծանագրում է, որ G20-ի զագաթածողովի օրակարգում դրված ներզաղթի, առեսրի եւ կլիմայական փոփոխությունների հարցերը մարուք էին թվում Թրամփ-Պուսինի հանդիպման ֆոնի վրա:

Ֆրանսիական Les Echos-ն ու քրիստական The Times-ը իրենց հերթին նում են, որ Թրամփը այդդես էլ չվերականգնեց ԱՄՆ-ի մասնակցությունը Փարիզի կլիմայական համաձայնագրին եւ չհրաժարվեց առեսրի ներկղանավորումից: **Պ. Բ.**

ԱԿ Երակի մարզային գրասենյակում հերթական միջոցառումը նվիրված էր ֆրիսոնեական դաստիարակությանը

Այսօր արագ փոփոխվող աշխարհը նորանոր մարտահրավերներ է ծնում, որոնց դիմակայելը կենսական նշանակություն ունի հասկալի մեզ նման փոքր ածու ժողովրդի ու նրա երիտասարդ ժեռության համար: Արդի հասարակությունում ֆրիսոնեական դաստիարակության դերին էր նվիրված Ռամկավար Ազատական կուսակցության Երակի մարզային կառույցի կազմակերպած բանախոսություն-գրույցը, որին մասնակցեցին սեղի ուսանող երիտասարդներ, դասախոսներ, մտավորականության, արվեստի ոլորտի ներկայացուցիչներ:



Բանախոսը՝ Երակի հոգեւոր թեմի ֆրիսոնեական դաստիարակության կենտրոնի վարիչ-սնօրեն Տեր **ՆՇԱՆ ԲԱԽԱՆԱ ՊԱՆՖՅՈՐՈՎԸ**, իր խոսքում անդրադարձ կատարելով աշխարհի ներկա իրավիճակին, նկատեց, որ նախկինում ֆրիսոնեական արժեքների կողմ էր Երակում այսօր արդեն այդպիսին չէ: Ըստ Տեր Յոհ, այսօր աշխարհում առաջ է արվում, արթն կառույցների միջոցով ժողովուրդներին դաստիարակում է մի նոր կրոն՝ մարդու իրավունքներ անվամբ: Անհատի կարեւորելն ու նրան համայնքից կտրելը, ա-

ռանձնացնելը մարդկանց հեռու կառավարելի դարձնելու նպատակ է հետադիմում: Իրենց այսօրվա արթն շեղումը ֆայթայիչ, հասկալի երիտասարդությանը սրանքոնացիայի ենթակող «արժեքներ» ուզում են նաեւ մեզ դասադրել: Դրանց կողմնակիցը համար, բանախոսի գնահատմամբ, մեծ մասն է ամուր դասերի ամենից բաց հարվածի սակ ընկնող մեր ընտանիքն ու ֆրիսոնեական արժեքաբանությունը: Ընդ տեղի ժամ տեսած գրույցը բարունակվեց ակտիվ հարցազրույցներով, Աստու

ղասվորանների թեմայով ուսանողների ուժերով կազմակերպված փոփոխվող բեմականացումով: Վերջում օգտակար գրույցի համար շնորհակալություն հայտնելով ֆրիսոնեական Տեր Յոհ, ՌԱԿ մարզային կառույցի դասախոսնաժողովը **Հովիկ Կարադեյանը** նրան նվիրեց օրեր թեմային մեծակարգի միջոցով «Փանոս Թերլեմեզյան, Կյանքիս հուշերը» գիրքը: Այն լույս է տեսել Երակում Տեր-Կառապետյանի աշխատասրահում: **Գ. Մ.**

Ռոմինգի ցածր սակագներ՝ Եվրոպայի մի ԵԱԲԻ երկրներում, Եգիպտոսում, Իսրայելում եւ Ավստրալիայում

ՎիվաՍել-ՄՏՍ-ը սեղեկացնում է, որ մինչև 2017թ. սեպտեմբերի 30-ը Եվրոպայի մի ԵԱԲԻ երկրներում՝ Ալբանիայում, Ավստրալիայում, Բելգիայում, Գերմանիայում, Իռլանդիայում, Իսպանիայում, Իտալիայում, Կիպրոսում, Հունաստանում, Հունգարիայում, Մալթայում*, Մեծ Բրիտանիայում, Նիդեռլանդներում, Չեխիայում, Պորտուգալիայում, Ռոմինիայում, Ուկրաինայում** եւ Ֆրանսիայում, ինչպես նաեւ՝ Ավստրալիայում, Եգիպտոսում եւ Իսրայելում ռոմինգում մուտքային զանգերի եւ «Զանգ Հայաստան» ծառայության միջոցով ելքային զանգերի համար սակագինը կազմում է 55 դրամ/րոպե:

Բացի այդ, հնարավոր է օգտվել ելքային SMS ծառայությունից՝ 35 դրամով 1 SMS-ի համար, եւ ինտերնետ ծառայությունից՝ ընդամենը 25 դրամ 1 ՄԲ-ի համար***:

Առաջարկի ԵԱԲԻ-ի եւ ինտերնետի համար սակագները գործում են հետևյալ երկրներում՝ նվազագույն օրերի ընթացքում:

Երկիր	Օպերատոր
Ալբանիա	Vodafone
Ավստրալիա	Vodafone
Գերմանիա	Vodafone
Եգիպտոս	Mobinil, Vodafone, Misr
Իռլանդիա	Vodafone
Իսպանիա	Vodafone
Իսրայել	Hot Mobile, Pelephone
Իտալիա	Vodafone, Ti
Հունաստան	Vodafone, Wind
Հունգարիա	Vodafone
Մալթա	Vodafone
Մեծ Բրիտանիա	Vodafone
Նիդեռլանդներ	Vodafone
Չեխիա	Vodafone
Պորտուգալիա	Vodafone, Meo
Ռումինիա	Vodafone
Ֆրանսիա	SFR

«Հասանելի եւ հարմարված ծառայություններ ապահովելը, անկախ բաժանորդի գտնվելու վայրից, ՎիվաՍել-ՄՏՍ-ի առաջնահերթություններից է: Հասկալի առաջին արձակուրդների հաճելի ԵԱԲԻ-ն մեզ ջանք չենք խնայում՝ արժեքի մեկնած մեր բաժանորդներին ռոմինգի անխափան ու մասշտաբային ծառայություններ սրանդրելու համար՝ ընթացքում եւ ընկերների հետ ԵԱԲԻ-ի հնարավորությունները ընդլայնելու նպատակով»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր սնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Մանրամասն սեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օձյալ» դրոշմի միջոցով, կամ այցելել մեր սոցալալական կենտրոններից որևէ մեկը: Մեր նորություններին մատուցելու ծառայությունները իրենց համար միացված մեզ ֆեյսբուքում <https://www.facebook.com/MTSArmenia/>

- * Մալթայում «Զանգ Հայաստան» ծառայությունը գործում է միայն «Go Mobile» օպերատորի ցանցում:
- ** Մոսկվայի զանգերի եւ «Զանգ Հայաստան» ծառայության ԵԱԲԻ-ն ստանալու համար սակագինը գործում է միայն «Vodafone Ուկրաինա» օպերատորի ցանցում:
- *** Շվեյցարիայում ռոմինգում գտնվելու դեմքում է 65 դրամ/10 ԿԲ սակագինը:

Մեկդարյա բեղմնավոր կյանք

Լրացավ ՀՀ վասակավոր ժողովուրդի, ազգային մանուկի ճանաչված երախտավոր **Էդվարդ Շահիրյանի** 90 տարին: Նա միակն է մեր հանրապետությունում, որ ավելի քան կես դար անընդմեջ աշխատել է հանրապետության մայր թերթի խմբագրությունում՝ 24 խմբագիրներից 12-ի հետ, հանդես գալով սուր եւ սկզբունքային հարցադրումներով, ֆելետոններով, հրատարակախոսական հոդվածներով, էսսեներով, ակնարկներով, իրավական բնույթի նյութերով, երգիծական մանրադրամներով:

Գալի հարցազրույցներ է վարել գիտության մեծահռչակ երախտավորների՝ Հրաչյա Աճառյանի, Արեւն Տերտերյանի, Գրիգոր Ղազարյանի, Արարատ Դարիբյանի հետ, լուրջ ավանդ ներդրելով նրանց կյանքում ու գործունեությունը հանրության սեփականությունը դարձնելու գործում: Լրագրողի բեղմնավոր գործունեությանը զուգահեռ նաեւ գրական փորձեր է կատարել: Էդվարդ Շահիրյանը այսօր էլ աղյուս է լիարժեք կյանքով՝ մանուկից, գրականությունից անբաժան: Ընդհանրապես մեկ վասակալուստ լրագրողի 90-ամյակը եւ մարթուն ամենայն բարիք: **ՀԾՄ նախագահ՝ Ասողիկ Գեորգյան**

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թղթադրամների էմիսիայի ընթացքում հրատարակվող մրցույթի կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետեւ՝ ՀՀ ԿԲ) հայտարարում է հրատարակվող մրցույթ՝

1. 1000 դրամ
2. 2000 դրամ
3. 5000 դրամ
4. 10000 դրամ
5. 20000 դրամ
6. 50000 դրամ

անվանական արժեքով Հայաստանի Հանրապետության 3-րդ ԵԱԲԻ թղթադրամների էմիսիայի ընթացքում համար:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԲ՝ ֆ. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի 6 հասցեով:

Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2017 թ. սեպտեմբերի 15-ը, ժամը 17:00: Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2017 թ. սեպտեմբերի 19-ը, ժամը 16:00: Մրցույթի արդյունքների ամփոփման օրն ու ժամն է 2017 թ. հոկտեմբերի 6-ը, ժամը 16:00: Մրցույթին մասնակցելու հրատարակվող ծանուցումը սեղեկացված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ սեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ՀՀ ԿԲ Դրամաբանության մրցույթին:

Հեռ.՝ +374 10 59 28 02, 59 28 05, 59 29 04, 59 29 05

Ֆաքս՝ +374 10 52 48 81

Էլ. փոստ՝ galust.galstyan@cba.am

ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

VIVA CELL MTS

Հայտարարություն

Հարգելի գործընկերներ

Ի դասախոսական բազմաթիվ հարցումների եւ հրատարակումների, ՎիվաՍել-ՄՏՍ-ը սեղեկացնում է, որ կարճ (SMS) հաղորդագրության միջոցով՝ ակտիվացման համար վճարման ձեռքով եւ զանգահարող գումարի դրույթապետի սահմանում ու դրանց փոփոխումն ընկերության իրավասության ԵԱԲԻ-ներից դուրս են: Ըստ այդմ՝ վերը նշվածի առնչությամբ ընկերությունը որևէ նախաձեռնությամբ հանդես չի ելել:

Համադասախոսական դայմանագրի հիման վրա ՎիվաՍել-ՄՏՍ-ին վճարվող միջնորդավճարի տրուստային մնացել է անփոփոխ:

ՎիվաՍել-ՄՏՍ-ը որդես հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող ընկերություն, ի թիվս այլ ընկերությունների, իրականացնում է անկանխիկ եղանակով ակտիվացման համար վճարման փոխանցելու՝ բացառապես սեփական աջակցության գործառույթ:

Ընդհանրություն:

«ԱԶԳ» ԸՐԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակության ԻԵ ՏԱՐԻ Հիմնադրի եւ հրատարակիչ «ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ

Երևան 0010, Հանրապետության 47

e-mail: azg@azg.am, azg2@arminco.com

www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈՒԲ ԱԻԵՏԻՉԵԱՆ հեռ. 060 271117
Հավակալություն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենյակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայություն հեռ. 060 271115

Ընթացիկ լրատվական ծառայություն

հեռ. 060 271114, 010 529353

Համակարգչային ծառայություն՝ «Ազգ» թերթի

Թերթի միջոցով ամբողջական թե՛ մասնակի արձանագրություններ սղագիր մանուկի միջոցով, ռադիոհեռուստատեսությամբ կամ համացանցով, առանց խմբագրության գաղտնի համաձայնության խոսքի արգելում են համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի: Նիւթերը չեն գրախոսուում ու չեն վերադարձնում:

Գ ՏԱՐԻԿ ԵՐԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳՈՎԱԳՐԱՅԻՆ ԵՆ, որոնց բովանդակությունները համար խմբագրությունը դասախոսականության չի կրում: «AZG» Weekly Editor-in-chief H.AVEDIKIAN / phone: 374 60 271117 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

Ազգայնականություն

Թիվ 27(329)
14 ՀՈՒԼԻՍ
2017

Նաիր 3ԱՆ

Այս օրվա «Ոսկե ծիրանը» 14-րդն է: Հիմնադիր-նախագահ **Հարություն Նաչատրյանը** խոստացել է մի զբոսայգի ներկայացնել հանրությանը, որտեղ նվազ կլինեն փառաստանի բոլոր ձեռքբերումները՝ թվերով ու վիճակագրական դասկերով: «Ոսկե ծիրանը» դեռևս չի կարող հավակնել, որ բանկ ու հեղինակավոր ֆիլմերի համաժառանգություն լինի հանրությանը, որտեղ նվազ կլինեն փառաստանի ժամանակ, բայց Կաննի, Բեռլինի, Վենետիկի, Ռոստերի մրցանակակիր, բոլորովին վերջերս նկարահանված ֆիլմեր այս անգամ հաջողվել է բերել Հայաստան: Այս ձեռքբերումը չի կարելի նշանակելի որ արժեքավոր

Ընդհանրապես Կաննի, Բեռլինի, Վենետիկի, Ռոստերի միջազգային կինոփառատոների մրցանակակիր ֆիլմերը սրանքանորեն ներառված էին ոչ թե մրցության, այլ արժանացության ծրագրում: Թեև մի թափում երազանք են փայլալույս, որ «Ոսկե ծիրանին» որեմիտերա ունենալն ու հաղթող ֆիլմի սիստեմային արժանանալը աշխարհահռչակ ռեժիսորների համար մի օր նոյնպես դառնա: Առայժմ մենք ենք խնդրողի դերում, ոչ թե նրանք, մենք ենք ջանում-համոզում, որ նրանք համաձայնեն իրենց մրցանակակիր ֆիլմերը ցուցադրել երեսնամյա փառատոնին:

«Ոսկե ծիրանի» «Լեհական կինոյի օրը» նվիրվեց **Անջել Վալդային**: Անվանի կինոռեժիսորի հետ բանակցությունները հաջողու-

թային ծրագրում ներկայացված ֆիլմերի ռեժիսորների մեջ ծանրակշիռ թիվ էին կազմում հայերը: Նրանք թե՛ Հայաստանից են, թե՛ Սկյուռլանդից: Մեծ մասամբ ներկայացրել էին կարճամետրաժ ֆիլմեր ու առայժմ հաղթողի սիստեմային համար դաշտում են իրենք իրենց մեջ՝ «Հայկական համայնադասարան» ծրագրում, ոչ թե օտարազգի ռեժիսորների հետ միջազգային մրցության ծրագրում: Բայց ինչպես կինոգեներն են փաստում, հայկական ֆիլմերում ուսուցանող ակնհայտ շեղանկեր ու փոփոխություն է նկատվում:

«Ոսկե ծիրանի» բացթողումներից ու թերություններից շատերս բազմիցս ենք դժգոհել: Միջազգային փառատոնները նախ և առաջ ղեկավարվում են սեփական ժողովրդի, ազգային կի-

Սեւ-սպիտակ լուսանկարներով վարդագույն երեւանը



«Երեւան. 20-րդ դար». այնպես է սացվել, որ 21-րդ դար ցանկանում էր Երեւանի անցյալի մասին խոսում ենք հարյուրամյակի բաժանումով: 21-րդ դար ցանկանում էր մի մասը 20-րդ դարի Երեւանի մասին լուսանկարներով ու հիշել չի կարող, եթե նախորդ հարյուրամյակում միայն մանկություն կամ դաստիարակություն է թողել: Իսկ նրանք, ովքեր այնտեղ թողել են ավելի, կհիշեն Երեւանի սարահանրային դաստիարակությունը, փակ շուկան, «Մանկական աշխարհ» հանրախանութը, «Սեւան» կինոթատրոնների, Կասկադի, «Հրազդան» մարզադահլիճի, Մանկական երկաթուղու նախկին սեփական շուկան, հուշեր կդաստիարակում իրենց սիրելի անկյունների ու շենքերի մասին: Երեւանի համը ու հոսք կորել է, կորուսել ու հմայվել վերացել. շատերն են ցավով բողբոջում: Երեւանի **Հայաստանի Հանրապետության Պաշտպանության** ոչ հեռուակա հարց է ուղղում է. «Երբ ձեռքներդ հեծ ու հանգիստ բարձրանում է, որ հին շենքեր ավերվել են և արվարձաններ, ֆալսիտներ, մտաբերված, մտածելի են, որ հանցանք են գործում, մեծ հանցանք»:

Սացվել է այնպես, որ զինակցված կամ չզինակցված հանցանքներով մեր ֆալսիտները ձեռքներդ ենք, դաստիարակությունից, կենսագրությունից, համոզմունքից օգտվելու օրվա: Ու հիմա ջերմ ու բարի հուշերը մեր ֆալսիտային Երեւանի մասին սիմվոլիկ ենք թերթի կամ մտքի, կամ թղթի թերթով: «Մեղիամաս» ընկերության ջանքերով կազմվել ու վերահրատարակվել է «Երեւան. 20-րդ դար» գիրք-ալբոմը, որը ներկայացնում է ոչ հեռավոր անցյալի մայրաքաղաքի չափազանց նկարագիր: Յուրաքանչյուր շենք-հուշարձանի հին, կուսակալ լուսանկարներին կից գեղեցիկ են դրսևներ՝ կառույցների ստեղծման, ճարտարապետ-նախագծողի կենսագրության մասին, ինչպես նաև այն մարդկանց հուշ-դաստիարակությունները, ովքեր կյանքի այս կամ այն դիրքով առնչվել են այդ ժամանակի հետ ու ջերմ հիշողությունները շեղանկերով 21-րդ դար:

Ընթերցողը հնարավորություն ունի հին Երեւանի լուսանկարները համեմատել մերօրյա Երեւանի հետ. ցավոք, համեմատությունը կսխալեցնի ու ցավ կդաստիարակի: Երեւանի շենքերը Գրիգոր Աղաբաբյան, Գեորգ Մուսեղյան, Հրաչ Պողոսյան, Գեորգ Զոհար, Տիրան Երևանյան, Զին Թորոսյան, Արթուր Թախանյան, Արամ Արամյանի անունով են: Մյուս կողմից կենսագրություններ են, որոնք մերօրյա Երեւանի անդամ, մասնաճյուղ անհամապատասխան ժամանակների կողմից երբեմն խեղճանում են ու կորչում: Մինչդեռ նրանք կերպարավորված կորոններ են, սիմվոլներ, կյանք ու դաստիարակություն ամբողջ, շենք հոգիներ: Գրում ներկայացված են հետաքրքիր փաստեր ու դաստիարակություններ, որոնց միջոցով հասկալի ենք սերունդի ընթերցողը համադրական շեղանկերով կստանա եւ խորությամբ կձանձրվի մեր ֆալսիտ երբեմնի դիմագիծն ու նկարագիրը կազմող շենք-հուշարձանները: Դրանց կառուցման ընթացքը, հանգամանակները հայտնի են էջերին. նրանք էլ իրենց դաստիարակում են դրանց մասին:

«Երեւան. 20-րդ դար» գիրքը կամրջում է մեր հիշողությունները, կարող է Երեւանի երեւել ու այսօր: Իհարկե, հիմը վերականգնել այլևս հնարավոր չէ: Նախկինում Երեւանի այցելաբար հանդիսացող ժողովուրդները փայլալույս էին, ակնածանով վերաբերվում: 20-րդ դարի Երեւանի ճարտարապետները թերթում են գիրք ու այնտեղ շենքում հենց իրենց նախագծով կառուցված ժողովուրդների սեւ-սպիտակ լուսանկարները: Ի՞նչ են զգում նրանք... ղեկավարվում են դրանց լինել ու հարցնել: **ՆԱԻՐ 3ԱՆ**

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ» ...

այնուամենայնիվ, փառատոն

չհամարել: Փառատոնային ուղիներ, օրվա Երեւանյան ցուցադրություններ անցած ֆիլմերի հետ մեկտեղ կինոսիրողն այս անգամ հնարավորություն ունեցավ դիտել կինոպարադիսոնանս, համացանցում չստեղծված ֆիլմեր, այսինքն՝ ծանոթացավ համաշխարհային կինոյի ամենաթարմ նմուշներին: Լավ ֆիլմերի ցուցադրությունները լավ հանդիսատես են ունենում. դահլիճները համարյա լի են էին: Արժեքավոր, արվեստ դարձնակող ֆիլմեր փնտրողներ, այնուամենայնիվ, կան, ու հենց նրանց ճանաչելն է ամառը: «Ոսկե ծիրանը»: Նրանք լավ չեն, հո՛ծ բազմություն չեն ու չէին էլ կարող այդպիսին լինել, որովհետեւ, ինչպես ասում են՝ լավ բանը փչ է լինում:



Եվ այսպես, «Ոսկե ծիրանը» հաճելիորեն ստիպեց ամառային ամառն ու ճոճ արհամարհել ու դահլիճից դահլիճ վազել՝ լավ ֆիլմերը բաց չթողնելու համար: Օտարազգի ֆիլմերի հայերեն լուսագրերի հարցը շատ անգամ է դժգոհության առիթ լինում, բայց դե հազված օրերի ընթացքում Հայաստան հասած ֆիլմերի հնչյունավորումներն արդարավոր, համաձայնեմ, անհնար է:

14-րդ «Ոսկե ծիրանին» համաշխարհային կինոյի հին աստղեր չկային: Կազմակերպիչները որոշել էին սնտեսել փառատոնի բյուջեն: Համաշխարհային կինոյի վարդապետների ֆիլմերի հետադարձ ցուցադրությունների ծրագիրն ավանդաբար այս օրի էլ եղավ: Ֆրանսիական կինոյի ամենաազդեցիկ ռեժիսորներից մեկի՝ **ժան-Պիեռ Մելվիլի** հարյուրամյակի կապակցությամբ ցուցադրվեցին նրա հինգ ֆիլմերը: Պրոսոպայացի կինոգեներ, «Մելվիլը Մելվիլի մասին» գրի հեղինակ **Ռուի Նոգեյրանը** հասուկ դասախոսություն կարդաց ժան-Պիեռ Մելվիլի մասին: Կաննի հիմնական մրցության ծրագրից **Ֆրանսուա Օզոնի** «Երկրորդ սիրելի» ֆիլմը ցուցադրվեց «Երեւանյան ղեկավարներ» ծրագրի շրջանակում:

Համաշխարհային կինոարվեստում վաղուց ճանաչում ձեռք բերած վարդապետների ու հայտնի անունների կողմից կային համեմատաբար նորերն ու բոլորովին նորահայները: Կինոսիրողների մի մասն էլ նոր անունների փնտրումով էր դահլիճից դահլիճ վազում: Ուրախային այն է, որ այս օրի ակնհայտորեն գերակշռում էր հայկական յանը. մրցու-

նոյի զարգացման, առաջընթացի համար ֆալսիտայինություն մշակելն ու ըստ այդմ առաջնորդվելն: Հակառակ դեպքում՝ միայն ֆիլմեր բերելով ու հին աստղերին հրավիրելով՝ շեղում դրվում են ու մի գլուխ փող ծախսում: Մինչդեռ մյուս կինոփառատոնները նաև համաշխարհային կինոարվեստի սկսելուն, դրսից ներդրողներ, որոնք արժեքներ հրավիրելուն եւ շեղի սցենարիստ-ռեժիսորների հետ գործընկերային հարաբերություններ հիմնելուն են ծառայում: Այս ա-

ռումով հայ-թուրքական կինոդաս-թորմը բավական չէր. ավելացել է նաև «Ստեղծարար Եվրոպա» թորմը, որի շրջանակում ներկայացվում են նախագծեր, սցենարի զարգացման ծրագրեր, կազմակերպվում հանդիպումներ դրսի մասնագետների ու մեր սցենարիստ-ռեժիսորների հետ: «Ոսկե ծիրան» փառատոնին կից կինոուսուցանող ծրագրերով ամհրաժեշտությունը վարդուց է ծառայել: Դեռ նախորդ օրերին էր ղեկավարվում այդ հարթակի վրա դեմ ու կինոարտադրության ժամանակակից մեխանիզմներով դուրս գալ միջազգային աստղերից: Կինոուսուցանող ծրագրերը դեռևս դարձրած չեն, բայց նախարար **Արմեն Ամիրջանն** էլ է հույս արած, թե «Ոսկե ծիրան» այդ առումով կարող է արածաբար շանային դեր կատարել:

«Ոսկե ծիրան», այնուամենայնիվ, փառատոնային հնչեղություն, ազդեցություն ու նկարագիր ունի: Մայրաքաղաք Երեւանի կենտրոնում ամեն օրի հույսային մեկ շաբաթն ամբողջ է կինոյով: Փառատոնի ազդեցությունը ֆալսիտ նոր շենք են հարողում: Դեռ 14-րդը չարվարած՝ կազմակերպիչները 15-րդն են ցրած սվել: Բացման ելույթի ժամանակ Հարություն Նաչատրյանը Կիլիկիա սել ՄՍՍ-ի գլխավոր սեփական էր 15-րդ «Ոսկե ծիրանը» հովանավորելու, ավելի մեծ ծախսերով փառատոն անցկացնելու համաձայնություն սալ: Ռալֆ Յիրկյանը բեմից ժողաց ու ասաց. «Ուզում ես ինձից խոսք փաշել. չի սացվի»:

Սեղա ԱՆԱՆՅԱԼ

Պիեռ Տեր-Սարգսյանի մասին առաջին անգամ լսել եմ 1970-ականներին՝ Մեծն Ֆրեդերիկ Ֆեյդիի զրույցներից մեկի ժամանակ Երևանում, իսկ բախտ ունեցա նրան ծանոթանալու 1986-ին Փարիզում՝ նույնպես Ֆեյդիի աջակցությամբ:

Խոհուն աչքերով, զուտ ու ֆախոս Պիեռ Տեր-Սարգսյանի թարգմանությունները այդ նույն թվականին Փարիզում լույս էր տեսել Կոստան Ջարյանի «Նավը լեռան վրա» վեպը թարգմանված բնագրի Բոսոնի 1943-ի առաջին հրատարակությունից՝ Ջարյանի հակիրճ նախաբանով:

Մինչ մեր հանդիպումը թարգմանչի հետ, հասցրել էի հիացումով եւ ոգեւորւթյամբ կարդալ ֆրանսերենը, իսկ հանդիպումն անցավ բարի ու ջերմ մթնոլորտում: Վերջում միայն ասացի, որ աշխատել եմ որոշ ժամանակ Ջարյանի մոտ որդես ֆարսուղար-օգնական: Ափսոսանք հայտնեց, որ ավելի շուտ չեմ հանդիպել: Այլեւս առիթ չու-

Սակայն ուշիմ, բնասուր բացառիկ ընդունակ լեզուաբանին առնչվելով հայտնու ազգականներին, ինչպես նաեւ սարագիր հայտնի հայ ազնվականների (Տեր-Ղալիդյան, Բարսեղյան, Բեկզարյան, Աֆանասյան) ընթանիներին, ինքնուրույն հայերեն է սովորում՝ ստիպելով հորը նույնպես, որդեսգի իր հետ հաղորդակցվի հայերենով: Այս մասին վկայում է նաեւ անվանի լեզուաբան Անահիտ Տեր-Մինասյանը: Այս փուլումը հետագայում վճռորոշ են դառնում Պիեռի համար՝ ոչ միայն հայոց լեզվի, այլեւ հետաքրքրությունը Կովկասի, Իրանի, նաեւ Ռուսաստանի լեզուաբանականությանը հարցերի առնչությամբ:



Սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմը. Ֆրանսիայի 120.000 երիտասարդների շարքում Պիեռը նույնպես ուղարկվում է Պեռմանիա՝ այստեղ կոչված «Պարսաղի աշխատանքի ծառայության»: Այս դժվար աշխատանքը Պեռմանիան լեզուաբանի տարբերակ էր ոչ միայն ֆրանսիացիներին, այլևս

սում էր ուրիշ մի մեծ ու լեզուաբանական առաջնություն. հայ դասականներից, ֆրանսիացիներից ու ֆրանսախոս հայությանը ներկայացնելու մեծ ու դժվարին գործը:

Առաջին թարգմանությունը եղավ, ինչպես ասացինք, Կոստան Ջարյանի «Նավը լեռան վրա» ծավալուն (442 էջ) վեպը, որը լույս տեսավ 1986-ին Փարիզում:

Ի դեպ, մեր խորին համոզմամբ, այդ գործը (կրկնում են) խթան էր Պիեռ Տեր-Սարգսյանի համար շարունակելու հետագա հայօգուս թարգմանությունները:

Հավանություն չունենալով (եւ սեղը չէ հիմա) անդրադառնալ թարգմանչի լեզվական արժանիներին (դա առանձին թեմա է), կթվարկենք նրա ութ թարգմանությունները հայերենից-ֆրանսերեն.

1. Կոստան Ջարյան, «Նավը լեռան վրա», Փարիզ, 1986
2. Տիգրան Զյոզուրյան, «Վանք, Վարդապետի մը օրագիր», Մարսել, 1988
3. Գուրգեն Մահարի, «Ծաղկած փշալարեր», Փարիզ, 1990

Երախտավոր թարգմանիչը՝ Պիեռ Տեր-Սարգսյան (1921-2010)

նեցա տեսնելու այդ համեստ, լուսառող մարդուն:

Շատերն ասելու, որ «Նավը» Պիեռ Տեր-Սարգսյանի առաջին թարգմանությունն էր հայերենից, որը հետագայում Երջարձային էր լինելու նրա գրական կյանքում: Այս մասին՝ փչ հետև...

Վերջերս Փարիզի Հայ փաստագրական հետազոտության կենտրոնի (CRDA), որ ցավով այժմ փակված է, նախկին սնտեն ժան Կլոդ Զեբարձեանը բարի եղավ ինձ օգնելու գտնել Պիեռ Տեր-Սարգսյանի դատերը՝ Կասրիին, որին եւ հանդիպեցինք անցյալ մայիսին՝ փարիզյան նրա առավել քան համեստ, կոկիկ բնակարանում: Դուռը բացեց Կասրինը եւ, ո՛վ զարմանք, առջեւ կանգնած էր կարծես Պիեռ Տեր-Սարգսյանը՝ նույն աչքերով, նույն մեղմ ժղիտով, նույն զուտ ու համակրելի լեզուով: Շատերն ասելու, որ Կասրինը մեկ ֆառորով է միայն հայ: Նա ուռով լսում էր ինձ, հարցերիս լեզուստանելով հստակ ու կենսորոնացած՝ ժամանակ առ ժամանակ իր գրադարանից ինձ մեկնելով մի գիրք կամ զրույց: Մեր զրույցը տեւեց ստասածից ավելի երկար: Ասաց, որ հայերեն չի խոսում, բայց գիտի ռուսերեն:



սարբեր երկրների բազմազան երիտասարդների: Նման միջավայրում, ինչպես կասեցինք, չկա չարիք՝ առանց բարիքի. Եվս վերջին օտարալեզու միջավայրի ու մարդկանց հետ, Պիեռը սովորում է նախ՝ գերմաներեն, ապա՝ անգլերեն, իսպաներեն եւ ռուսերեն: Պիեռի ասել, անուշաք, որ ամեն մարդու չի սրված այդ աստվածասուր ընդունակությունը, որ ուներ նա:

Պատերազմի ավարտից հետո Փարիզ վերադառնալով, լեզուների իր իմացությամբ սկսում է աշխատել օտարալեզու՝ հասկալի անգլերեն հրատարակչությունների հետ՝ հասնելով ընդհուդ լեզուաբանական ոլորտի, թղթակցելով միաժամանակ հայալեզու հանդեսների: Այս սարիներին Տեր-Սարգսյանը հանդիպում է կյանքի իր աղագա ընկերուհուն՝ Եվգենյանի Պոլին Մյուլերին, որի հետ ամուսնանում է 1948-ին, իսկ 1950-ին բախտավորվում Կասրին-Աննիի ծնունդով, 1952-ին՝ Երիկ-Միսակի:



-Հայրիկս հետ առաջին անգամ Հայաստան գնացինք 1970-ին,- շարունակում է Կասրինը,- ցղավորությունը մեծ էր, հայրս բարեկամացավ անվանի մշակութայինների հետ, որ շարունակվեց հաջորդ այցելություններին:

Տարիներ են անցնում, Պիեռ Տեր-Սարգսյանը ուներ արդեն փորձ, ճակատ եւ իմացություն, եւ նրան սղա-



4. Եղիշտ Զարեմ, «Երեանի ուղիչ սնից», Մարսել, 1992
5. Հրանտ Մաթետոսյան, «Աւան արեւ», Փարիզ, 1994
6. Ջաղել Եսայան, «Սիլիհարի դարեգները», Փարիզ, 1994
7. Կոստան Ջարյան, «Կղզին եւ մի մարդ», Մարսել, 1997
8. Շիրվանգաղե, «Զառ», Մարսել, 2013



Կուզենայինք ավելացնել նաեւ, որ Մաթետոսյանի «Աւան արեւ»-ի Անդրեյ Բիսովի նախաբանը ռուսերենից թարգմանել է Կասրին Տեր-Սարգսյանը, իսկ Զարեմի «Երեանի ուղիչ սնից»-ի նախաբանը՝ դոկտոր-լեզուաբան Կլեր Մուրադյանը:

Մնացյալ բոլոր հրատարակությունների համալուսաստան նախաբանը կամ վերջաբանը գրել է Պիեռ Տեր-Սարգսյանը:



P. S. Հրատեւտ սալով Կասրինին, խոստանում եմ նորից հանդիպել, երբ նա երկնք ժղիտով ստուն է:

-Յորս բոլոր թարգմանությունները ինքս եմ մեքենագրել:

Ես զարմացած եմ եմ դառնում, հարցնելով՝ այդ դեղիում ասացել ո՞ր գործը սիրեցիք առավել աս:

-Կոստան Ջարյանի «Նավը» եւ Հրանտ Մաթետոսյանի «Աւան արեւ»:

Անի Բատիկյանի Նվագահանդեսը Լոնդոնում



2017թ. հունիսի 29-ին, «Զարդան Հոլ» հանրահայտ համերգասրահում, «Լոնդոնի Ֆենիս» նվագախմբի նվագակցությամբ, մենահամերգով հանդես եկավ միջազգային մրցույթների դափնեկիր, սաղանդաւաս հայ ջութակահարուհի Անի Բատիկյանը: Համերգի թեման էր «Արեւելյան Եվրոպայի արվեստը եւ ազգային երաժշտությունը», իսկ երեկոն համալրվել էր այնպիսի ստեղծագործություններով, որոնք մոտասակ ունեին լեզուաբանական կոմպոզիցիոնների աշխատանքները:

Համերգի ծրագիրը ներառում էր լեռ կոմպոզիցիոն՝ Վիթոլո Լյուսոսլավկու «Փոքր Սյուիթ»-ը, որի հիմնում հարավային Լեհաստանի լեռային մեղեդիներն են, անուշաք Արամ Խաչատրյանի կոմպոզիցիոն ջութակի եւ նվագախմբի համար, որում առկա են հայկական ազգային մեղեդիների թեմատիկ սարեր, ինչպես նաեւ Մուսորգսկու «Գեղանկարները ցուցահանդեսում» գործը՝ Ռավելի փոխադրմամբ:

Համերգի ընթացքում սեղի ունեցավ նաեւ Անի Բատիկյանի ամուսնու՝ կոմպոզիցիոն Ռոլանդ Ռոբերթսի ստեղծագործության յոթմիտերան, որի ոգեւնչման աղբյուրն էր մեծանուն ծովանկարիչ Հովհաննէս Այվազովսկու «Իններորդ ալիք» հայտնի նկարը: Այն նվիրված էր գեղանկարչի 200 ամյակին, ինչն այս սարի նվագում է ողջ աշխարհում:

Բատիկյանի կողմից Խաչատրյանի ջութակի կոմպոզիցիոն կատարումը սղավորիչ էր եւ անթերի. այն ի ցույց դրեց Անիի անզուգական հմտությունները, հիաստանչ եւ խորունկ ջութակահարի կատարողական արվեստն իր ողջ հմայքով: Համերգի ողջ ընթացքում Անին կլանել էր հանդիսատեսի ուշադրությունը՝ զմայելելով իր հիաստանչ կատարմամբ եւ «Մոնսանյանա» ջութակի ֆաղր հնչյուններով, որն ի դեպ արժե մոտ 900,000 ֆունտ ստերլինգ եւ սրամարդվել է Ingles & Hayday, Sotheby-ի աճուրդի ջութակի մասնագետների կողմից: Ռոլանդ Ռոբերթսի ստեղծագործությունը, որը գրված է ռուսական ռոմանտիկ ոճով եւ լուսնակում է հայկական սարեր, գեղեցիկ կերպով մասուցեց Այվազովսկու նկարի լուսնակությունը՝ հանդիսատեսին սահնակով մի ճամփորդության, որտեղ հանդարտ ալիքները վերածվում էին փոթորիկի եւ նավաստիները բախվում էին հարվածող ալիքներին:

Միմֆոնիկ նվագախումբը աղբեցիկ կերպով ներկայացրեց գործի գունեղ երանգները եւ ջութակի արտահայտիչ գեղեցկությունը: Այվազովսկու ամենահայտնի գեղանկարն այժմ ունի իրեն նվիրված երաժշտական ստեղծագործություն: Հանդիսատեսը գերազույն հաճույք սացավ՝ ունկնդրելով այս ստեղծագործությունը, իսկ կոմպոզիցիոն իր գործի կատարման ավարտին բեմ բարձրացավ՝ միանալով իր սիկնոցը:

1924թ. հիմնված «Լոնդոնի Ֆենիս» նվագախումբը հմտությամբ եւ մեծ խանդավառությամբ ելույթ ունեցավ դիրիճոր Բարիկյանի ղեկավարությամբ: Միջոցառման կազմակերպիչն ու հովանավորն էր Թեթյան մշակութային միության լոնդոնյան մասնաճյուղը:

Նագեճիկ ՍԱՐԳՍՅԱՆ Արծվի ԲԱՆՉՈՒՆՅԱՆ

Նրա հոգին դարում է ընդմիշտ ԱՆՆԱ Ջանբազյանի հիշատակին

Լուս Անջելեսից ստացած լուրն անուղապես էր ել գնցիչ. հունիսի 28-ին կյանքից հեռացավ սիրունահայ դարավեսի ճանաչված ել ինֆոսոփ գործիչներից մեկը՝ ԱՆՆԱ Ջանբազյանը (1952-2017): Մեր սաղանդավոր հայրենակցուհին, ընդամենը երկու տարի առաջ, հունիսին, երեսնամյա հանդիսատեսին երրորդ անգամ ներկայացավ իր դարավեսի ելույթներով, Դիմագրով մենի միջոց հետևում էին նրա գործունեությանը... ել հանկարծ, դարձ երկու-հինգ րոպեով ընդմիջված և անհայտ դարձավ իր հայրենիքում... (Ավելի քան 40 տարի առաջ այս նույն հիվանդությունից էր վախճանվել նաել մեկ այլ հայագահ ամերիկյան ճանաչված դարուհի՝ Ադրիանա Օսերո Փանոսյանը):



Ժամանակակից դարերի մագիստրոսի աշխճան:

Հայ ել դարսիկ ժողովուրդների դուստր ԱՆՆԱ (Աննահիճ) Ջանբազյան իր մեջ կրել է զույգ մշակույթները՝ լեզուները, գրականությունը, երաճոսությունը, երգ ոլ դարը, որոնք հետագայում մարմնավորվել են նրա դարային բեմադրություններում: Պարավեսին նվիրվելը կամ խորոզված էր («Ես քայլել եմ՝ դարելով», - ասում էր նա), քանզի Աննահիճի հայրը Իրանում բալետային արվեստի հիմնադիրներից դարուսույց Սարգիս Ջանբազյանն էր՝ լեզենդար Ագրիոնյան Վազանովայի աշակերտը: Երեք տարեկանից աղջիկը սովորել է հոր մոտ, իսկ յոթ տարեկանից հանդես եկել նրա բեմադրած դարային դասերներում: Աննահիճ Ջանբազյանն առաջին սիրունահայերից էր, որ մասնագիտական կրթություն է ստացել Հայաստանում՝ 1968-1971 թթ. դասական ել ժողովրդական դար ուսանելով Երեսնի դարավեսի ուսումնարանում (ուսուցիչներ՝ Ալեքսանդր Բոզանկովա, Սերգեյ Սարգսյան, Պավլինե Բուռնազյան, Ելենա Սամուրյան): 1972-ին վերադարձնալով Իրան՝ դարձել է հոր դարավեսի դրոցի սնորհը, ուսուցիչը, դարողը ել դարադիրը, բեմադրել հայկական, դարսկական, ռուսական, նաել ժամանակակից դարեր: Սակայն Իրանի իսլամական հեղափոխությունից հետո ԱՆՆԱ Ջանբազյանը դարադրումները ստիոված անցկացրել է զաղսնի, ֆողարկված լուսանուսներով սրահում, ռաճ ցածր երաճոսությամբ: Հասկանալով, որ իր մասնագիտությամբ Իրանում մնալն անհեռանկար է՝ 1984-ին տեղափոխվել է ԱՄՆ: Լուս Անջելեսի Զալիֆորնիայի համալսարանում ստացել է

ժամանակակից դարերի մագիստրոսի աշխճան: 1988-ին Գլենդեյլում վերաբացել է «Ջանբազյան դարի ակադեմիա» դրոցը, 1992-ին՝ «Ջանբազյան դարախումբը», որոնք գործում են «Ջանբազյան դարի հիմնադրամի» միջոցներով: Հիմնականում հայ աղջիկներից կազմված նրա դարախումբն իրականացրել է 150-ից ավելի դարային բեմադրություն՝ լիամետրաճ բալետներ ել խորեոգրաֆիկ մանրադասումներ: ԱՆՆԱ Ջանբազյանը սիրադեբել է տարբեր դարային դրոցների համակարգերի, ինչդեռ արեսյան (ակադեմիական դար, մոդերն դար), այնդեռ էլ արեսյան հայկական ոլ դարսկական ֆոլկլորային ել դրոֆեսիոնալ դար: Դեռես 1982-ին, Թեհրանում նա բեմադրել է «Կոմիսսա. կրունկ բնավեր» ներկայացումը, որը վերականգնել է Լուս Անջելեսում, 2004-ին (որդես առանձին համար ներկայացվել է նրա մի հասկածը՝ «Կարո՞ղ ես սսվերները դարել» վերնագրով՝ նվիրված 1915-ի զոհ հայուհիներին): Ջանբազյանի մեծակսավ դարային բեմադրություններից են «Սկիզբը վերջում է» (2002), «Ռումի. արահես դեղի լուսավորություն» (2006) «Ջալ ել Ռուդաբե» (2009), «Հոգու գոհարը» (2014) ել այլն: Ջանբազյանի բեմադրությունները հիմնականում սինթետիկ թատրոնի արսա-

հայտություն են, որտեղ դարը միավորվում ել հեթազայում է գործիքային ել վոկալ-գործիքային երաճոսությամբ, արճակ դասումով ոլ բանաստեղծությամբ: Դրանցում գործածվել են ազգային նվագարաններով կասարվող իրանական ժողովրդական երաճոսական ձեւերը, հայկական մոնոդիկ ֆոլկլորային երգերը, ել ինչդեռ հայ, այնդեռ էլ տարբեր արեսյան երկրների երգահանների ստեղծագործությունները: Հաճախ, հասկադես արեսյան բեմաներով բեմադրություններում, դարսկական ժողովրդական գործիքներ նվագողները զսնվել են բեմի վրա, երբեմն էլ խորեոգրաֆիան ուղեկցվել է արճակ ել չափածո տեքստով՝ ստեղծելով յուրորինակ մի սինթեզ, լեզվի ռիթմիկ ել դասկերավոր արսացումը դարի մեջ:

Թեել ներկայացումների վերնագրերից կարելի է մտածել, թե գործ ունենի դիդաքարային գիծ ունեցող բեմադրությունների հետ, դրանք իրականում դարի լեզվով արսահայտված հաջորդական-դասմոդական աստր չեն. ավելի ռուս կարելի է անվանել խորեոգրաֆիկ բանաստեղծություններ ել դեմներ: Նրա դարային բեմադրություններին բնորոշ է վերացականությունը՝ միավորված դրամատիկական թատրոնի տարրերին, որոնցում Վազանովայի դրոցի նրբագեղությունը, փայլը ել ճկունությունը զգացմունքների բոլոր նրբերանգները միավորվել են զգայնությամբ ոլ ներընթացությամբ արսահայտվելու յուրահատուկ կարողության հետ: Դրանցում վառ արսահայտված է դարադիրի մտածողության այլաբանական, խորհրդադասական սիողը: Ընդ որում, Ջանբազյանի խորհրդադասությունը տուր չէ նորաճեությունը, այլ նրա բեմադրական մտածողությունը հասուկ ճե է, որի արմասները զայիս են բուն Արեսիցի: Դա օրինեսալիզմ (արեսյան դարերի ոճավորում) չէ, այլ հարազատ արեսյան մտածողություն, որը, ներհյուսվելով արեսյան դարային ձեւերին ել լեզվին, տայիս է անսովոր (նույնիսկ մեզ՝ հայերիս, առավել ես՝ արեսնոսֆիցների համար), իր ծննդաբանությամբ ոչ միոս դարձ ել բաց բանաստեղծական-դարային ճե ոլ լեզու:

Պարսկական հողում մեծացած հայուհի ԱՆՆԱ Ջանբազյանը, որ ֆաջատեղյակ էր դարսկական արվեստին, փիլիսոփայությանը, երաճոսությանը ել բուն

դարսկական դարին, գիտեր նաել, թե ինչդեռ այն առավել կամ դարկաս հսասկությամբ մասուցել արեսնոսֆից հանդիսականին. միայն թե նրա բեմադրությունները փոքր-ինչ խորհրդավոր են: Նույնան անսովոր են նաել հայկական բեմադրկայի նրա մեկնաբանությունները: Օրինակ, երկու տարի առաջ Հայաստանի ազգային դարավեսի միության նախաճեռնությամբ Երեսնում կայացած «Ջանբազյան դարի ակադեմիայի» 75-ամյա հորբեյանին նվիրված համերգին ներկայացված «Զարահունջ. ֆարի ռունջը» ներկայացումը: Ըստ նրան, այս բալետը չունի որոշակի դիդաքար: Այն վիողերգ է հայ կնոջ ոլ նրա տարբեր մարմնավորումների (Ասվաճուհի, Տիրամայր, ռազմուհի, նրբին աղջիկ, մայր) մասին: Բեմադրության մեջ բավականաչափ առկա են տարբեր ժանրերի հայկական խմբադարերի տարրեր: Առավել հետաքրքրական են այն ռարճումները, որոնք վերադարձում են հայկական տաճարների փորագրված նախերը, որոնք փաստացի խորհրդանիշներ են: Այողիսով, «Զարահունջում» ի հայտ են զայիս այլաբանությունը ել փոխաբերությունը:

ԱՆՆԱ Ջանբազյանի բեմադրություններն արճանացել են «Լեսթեր Հորթոն» ել ամերիկյան այլ հեղինակավոր մրցանակների, «Ջանբազյան դարի ակադեմիան» մասնակցել է բազմաթիվ դարային փառասոների (2005-ին Իսալիայում արճանացել է դարի փառասոնի զլխավոր մրցանակին): 2008-ին խումբն ունեցել է 100-ից ավելի աշակերտ՝ 5-ից 50 տարեկան: Հասկանալկան է, որ խմբի հետ որդես հրավիրված արտեսներ ելույթներ են ունեցել մի ռարք արեսավարճ դարող-դարուհիներ՝ Արդա Ամիրխանյանը, Արեսն Սերոբյանը, Դավիթ Հովհաննիսյանը, Էդգար Օվանյան, Կարլ Բորկին, Մարիա Տիլտմիրովան, Էնսոն Հոֆսհան, Ալբերտուի Ետիոնզան ել այլն:

Մի անգամ այն հարցին, թե ռարունակում է արդյոք դարել, Ջանբազյանը դասալխանել է. «Ոչ ելույթների ժամանակ, միայն երբ ես դասավանդում եմ: Այողուհանդերճ, իմ սիրսն ոլ հոգին մեատդես դարում եմ»:

Հիմա, երբ դարավեսի այս անխոնջ նվիրյալը բռնեց հավերճության ուղին, կարող ենք ասել, որ նրա հոգին ռարունակելու է մեատդես դարել...

Մրբուհի Աբաջյանի ցուցահանդեսը Տոկիոյում




Գլենդեյլից «News Press» դարբերականի հաղորդմամբ, ճարողնիայում հայկական դես-

զճանկարներն ոլ ֆանդակներն է ցուցադրել Տոկիոյում «Հայկական մշակույթի օրերի» ռոջանակներում:

Ցուցահանդեսում տեղ են զսել նրա «Ռոմանակարներ երկմի վրա» ել «Բոլոր ճանադարիները դեղի մարդկանց են առաջնորդում» ռարերից որոշակի նմուշներ:

Ժամանակին Լա Կրասենսայի «Դոմեջյան այգում» ցուցադրված առաջինի ռարում ընդգրկված են եղել 3 մետրx1,5 մետր չափսերով մարդկանց ֆանդակներ, որոնք իրենց դեմերի, աչքերի արսահայտությամբ ել ճեռերի ճեստերով իրենց իրավունքներն են դախանջում: Երկրորդի ռարում՝ ցուցադրված «Բեմոդ գրադարանի ել արվեստի կենտրոնում» հաղորդակցվելու կարոս ներգաղթյալների առօ-



րյան դասկերող կսավներ, զճանկարներ:

«Սիրում եմ զճանկարներով արսահայտել իմ զգացմունքները: Այող զճերը ավելի դարձ են ոլ անմիջական, բայց լի են հուզականությամբ: Կարեսոն չէ, թե որտեղ ենք մենք աղորում: Որդես

մարդկային էակներ մենք կարի ունենի հաղորդակցվելու միմյանց հետ ել անկեղծ հարաբերություններ մշակելու», նոցել է արվեսագիտուհին, ավելացնելով, որ դուստրը՝ Մայրենին ներկայիս ուսանում է Տոկիոյում:

Ս.Ս.